ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2011 թվական թիվ 127 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1030-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1153-Ն որոշումը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման փոխնախարարի 2011 թվականի օգոստոսի 6-ի թիվ 01/15/5108-11 գրության պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1030-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1153-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությանի 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ ընթացիկ դրամաշնորհներ> հոդվածով) հատկացված 6329.4 հազար դրամ գումարից 1000.0 հազար դրամ գումարն ուղղել ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումներին, մասնավորապես՝ երաժշտության համար անհրաժեշտ սարքեր և սարքավորումներով ապահովմանը, հրավառությանը, ինչպես նաև երաժիշտների կեցության և տրանսպորտային ծախսերի իրականացմանը, համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ նախատեսված գումարը սահմանված կարգով հատկացնել ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

14 սեպտեմբերի 2011 թ.
ք. Իջևան

Հավելված թիվ 1
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ սեպտեմբերի 13-ի
Թիվ 127-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
/21 սեպտեմբերի 2011թ/

Հազար դրամ

1	Երաժշտական և տեխնիկական սարքավորումների վարձակալում	150.0
2	Երաժիշտների կեցության և տրանսպորտային ծախս	100.0
3	Հրավառություն, համերգային մասին ձևավորում	500.0
4	Լոգոների, դրոշների և հրավիրատոմսերի պատվիրում	250.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	1000.0

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՎԹՅԱՆ